ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արաբագիտության մարզում մեր շուրջ կեսդարյա ուսումնասիրությունները բացահայտել են մի կարևոր օրինաչափություն: Հայ ժողովրդի պատմության փուլերը, որոնք դարակազմիկ կամ շրջադարձային նշանակություն են ունեցել, այս կամ այն չափով իրենց արտացոլումն են գտել արաբական պատմագիտության մեջ: Անշուշտ, դա ունի իր դրդապատճառները և պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից այստեղ կցանկանայինք առանձնացնել երկուսը, որոնք, մեր կարծիքով, ունեն առանցքային նշանակություն:

Առաջինը՝ երկու ժողովուրդների հարևան լինելու հանգամանքն է: Հայաստանը և արաբական երկրները աշխարհագրականորեն պատկանում են միևնույն տարածաշրջանին, որը պատմության մեջ հայտնի է Առաջավոր Ասիա, իսկ մեր օրերում ավելի շատ Մերձավոր Արևելք անվամբ: Տարածաշրջան, որը հնուց ի վեր եղել ու շարունակում է մնալ համաշխարհային քաղաքականության և պատմական կարևոր զարգացումների կենտրոն, ժողովուրդների, կրոնների, տարաբնույթ ճգնաժամների, իրադարձությունների ու դեպքերի մի բացառիկ խառնարան: Այդտեղ էլ «եփվել» է տարածաշրջանի բոլոր ժողովուրդների պատմությունը, ժողովուրդներ, որոնց մի մասը վաղուց և անվերադարձորեն անհետացել է պատմության թատերաբեմից, ինչպես շումերները, ասորեստանցիները, աքադները, խեթերը, խուրիները և այլն, իսկ մյուս մասը շարունակում է իր պատմական երթը: Այս վերջինների շարքին են պատկանում արաբները և հայերը, որոնց պատմությունը դարերի ընթացքում բազմիցս խաչաձևվել է: Նրանք երբեմն հայտնվել են հայկական պետության կազմում, ինչպես մ. թ. ա. I դարում՝ Տիգրան Մեծի կայսրության շրջանում, երբեմն արաբական պետության կազմում՝ VII–IX դարերում (նկատի ունենք Արաբական խալիֆայությունը), ապա միասին՝ XVI–XVII դարերից մինչև 1918 թ.՝ Օսմանյան կայսրության մասն են կազմել: Վերոշարադրյալը խոր հետք է թողել երկու ժողովուրդների պատմական հիշողության մեջ, նրանց գրավոր աղբյուրներում և նյութական մշակույթի հուշարձաններում:

Երկրորդը՝ հայերի և Հայաստանի առաջավորասիական կամ մերձավորարևելյան տարածաշրջանային գործոն լինելն է, որը, առանց չափազանցության, իր որոշակի դերակատարումն է ունեցել պատմական բոլոր դարաշրջաններում: Դա մի գործոն է եղել, որը հնարավոր չէր անտեսել: Դրա հետ հաշվի են նստել ժամանակի համարյա բոլոր գերտերությունները, ինչպես՝ Հռոմեական կայսրությունը, Պարթևստանը, Արաբական խալիֆայությունը և Բյուզանդական կայսրությունը:

Ուստի, արաբական պատմագրությունը պարբերաբար անդրադարձել է հայերին, Հայաստանին և, ընդհանրապես, հայկական նյութին, որը վերաբերում է պատմական այն ժամանակահատվածներին, երբ Հայաստանի ռազմաքաղաքական նշանակությունը չի սահմանափակվել զուտ հայկական շրջանակներով, այլ ունեցել է տարածաշրջանային դերակատարում:

Հայաստանի և հայկական իրողությունների նկատմամբ արաբական պատմագիտական հետաքրքրության առաջին լուրջ բռնկումը տեղի ունեցավ IX դարում, երբ ձևավորվեց արաբական դասական պատմագիտությունը, և նրան հաջորդած դարերում: Արաբ պատմիչները և աշխարհագրագետները չսահմանափակվեցին սոսկ սեփական պատմության հարցերի ուսումնասիրությամբ ու լուսաբանությամբ, այլև իրենց հայացքը նետեցին իրենց շրջապատող երկրների ու ժողովուրդների անցյալ և ժամանակակից պատմության վրա, ձգտելով ավելի խորը հասկանալ սեփական պատմությունը՝ շաղկապված անմիջական, մերձավոր ու հեռավոր հարևանների պատմության հետ: Նրանց տեսադաշտում անմիջապես հայտնվեց Հայաստանը: Մանավանդ որ IX դարը, մասնավորապես նրա երկրորդ կեսը, շրջադարձային պահ եղավ Հայաստանի պատմության մեջ, երբ վերջինս կարողացավ դուրս գալ Աբբասյան խալիֆայության կազմից և վերականգնել իր պետականությունն ու անկախությունը: Բաղդադը ճանաչեց Բագրատունյաց Հայաստանի անկախությունը և խալիֆա Մութամիդը արքայական թագ ուղարկեց հայոց արքա Աշոտ I Բագրատունուն:

Հայաստանի և հայերի, նրանց պատմության, աշխարհագրության, տնտեսության, քաղաքների ու բնակավայրերի, կենցաղի ու սովորույթների մասին իրենց երկասիրություններում և ուղեգրություններում մեծ տեղ են հատկացրել միջնադարյան արաբ պատմիչներ Բալազուրին, Թաբարին, Իբն ալ-Ասիրը, Մասուդին, Մաքրիզին, Իբն Շադադը, Աբուլ Ֆիդան, ալ-Դինավարին, աշխարհագրագետներ Յակուտ ալ-Համավին, Իբն Բատուտան, Իբն Խորդադբեհը, Իբն ալ-Ֆակիհը, Իբն Հավքալը, Իսթախրին և շատ ուրիշներ: Նրանց թողած գրական ժառանգության մի մասն ուսումնասիրել և արաբերենից հայերեն են թարգմանել ակադեմիկոս Հ. Աճառյանը[1], Գ. Մսրյանը[2], Հ. Նալբանդյանը[3], Ս. Տեր-Ղևոնդյանը[4] և այլք: Նման երևույթներ նկատվել են նաև հետագա դարերում, մասնավորապես, XIX դ. կեսերին, XX դ. սկզբներին և այլն: Սակայն այդ բնագավառում նոր էջ բացվեց XX դ. կե-

---

[1] *Իբն-ի Բատուտա. քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:*

[2] *Իպն Խալլիքան. Վեֆայաթ էլ Աաեան (Անհետացած երևելիներ), թարգմ. Գ. Մրսրլեան, Կահիրե, 1935:*

[3] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադադ. կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965:*

[4] *Ս. Տեր-Ղևոնդյան. Իբն ալ-Ասիր, Երևան, 1981, նույնի՝ Արաբական աղբյուրներ. Գ, Արաբ մատենագիրներ, Թ–Ժ դարեր. Ներածությունը և բնագրերից թարգմանությունները պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005: Այդ վերջին աշխատությունը պարունակում է հատվածներ արաբ 8 պատմիչների և 11 աշխարհագրագետների աշխատություններից:*

սերին, երբ Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում Իրաքում ու Պաղեստինում մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել արաբ հեղինակների մենագրական ուսումնասիրությունները և հոդվածները՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանն ու հայ-արաբական քաղաքական ու պատմամշակութային հարաբերություններին:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում արաբ հեղինակների բուռն հետաքրքրությունը հայ ժողովրդի պատմության նկատմամբ մեզ հիմք է տվել եզրակացնելու, որ այսօր մեր աչքի առջև ձևավորվում է արաբական հայագիտությունը: Արաբ պատմաբաններն իրենց մենագրական ուսումնասիրություններում և հոդվածներում անդրադառնում են ինչպես հայ ժողովրդի պատմությանն ամբողջությամբ, այնպես էլ նրա պատմական առանձին ժամանակաշրջաններին կամ դրվագներին: Այդ առումով կցանկանայինք հատուկ նշել արաբ հեղինակների ներդրումը հայոց
1915 թ. ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում[5]:

Ահա այս նույն մոտեցումների համատեքստում պետք է դիտարկել ու քննարկել նաև ժամանակակից արաբ պատմաբանների անդրադարձը հայոց արքայից արքա Տիգրան Մեծի գործունեությանը և նրա հիմնած Հայկական կայսրության դերակատարությանը մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում: Այդ առումով ուշադրության են արժանի հատկապես Ֆուադ Հասան Հաֆիզի[6], Մարվան ալ-Մուդավարի[7], Սամիր Արբաշի[8], Ուսման ալ-Թուրքի[9], Սալիհ Զահր ալ-Դինի[10], Ումար ալ-Դակակի[11] և այլոց աշխատությունները: Նրանք անդրադարձել են Տիգրան Մեծի գործունեության համարյա բոլոր կողմերին: Չկա շատ թե քիչ կարևոր հարց՝ կապված հայոց արքայի ներքին և արտաքին քաղաքականության հետ, որը դուրս մնացած լիներ նրանց տեսադաշտից:

Ժամանակակից արաբ պատմաբանները զգալի տեղ են հատկացրել հայ ժողովրդի պատմության պարբերացմանը: Հայոց անտիկ շրջանի պատմության պարբերացման հարցերը քննարկելիս, նրանց համար գլխավոր ուղենիշ է Տիգրան Մեծը: Իրենց աշխատություններում այդ հարցերին հատուկ անդրադարձել և մեծ տեղ են

---

[5] *Տես՝ Ն. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004,* N. H o v h a n n i s y a n. Arab Historiography on the Armenian Genocide. Yerevan, 2005.

[6] *Ֆ ո ւ ա դ Հ ա ս ա ն Հ ա ֆ ի զ. Թարիխ ալ-շաաբի ալ-արմանի մունզու բադայաթի հաթթա ալ-յաում (արաբերեն), Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986:*

[7] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. Ալ-արման աբրա ալ-թարիխ (արաբերեն), Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982:*

[8] *Ս ա մ ի ր Ա ր բ ա շ, Արմինիյա. արտ վա շաաբ (արաբերեն), Հայաստան. հող և ժողովուրդ, Բեյրութ, 1991:*

[9] *Ո ւ ս մ ա ն ա լ - Թ ո ւ ր ք. Սաֆահաթ մին թարիխի ալ-ումմա ալ-արմանիյա (արաբերեն), Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960:*

[10] *Ս ա լ ի հ Զ ա հ ր ա լ - Դ ի ն. Ալ-Արման. շաաբ վա կադիյա (արաբերեն), Հայաստան. ժողովուրդ և պրոբլեմ, Բեյրութ, 1988:*

[11] *Ո ւ մ ա ր ա լ - Դ ա կ ա կ. Թարիխ Արմինիյա- Ալ-Արման ֆի դահրաթի ալ-մաարիֆ ալ-իսլամիյաթի (արաբերեն), Հայաստանի պատմությունը-Հայերը Իսլամական հանրագիտարանում, IV, Կահիրե, 1969:*

հատկացրել, մասնավորապես, եգիպտացի պատմաբան Ֆուադ Հասան Հաֆիզը և սիրիացի պատմաբան Մարվան ալ-Մուդավարը: Նրանք հենց այդ հարցի լուսաբանությունից էլ սկսում են Տիգրան Մեծի դարաշրջանի ուսումնասիրությունը:

Ֆուադ Հասան Հաֆիզը «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» իր ստվարածավալ աշխատության մեջ (576 էջ) հայ ժողովրդի անտիկ պատմությունը բաժանում է երեք շրջանի և առանձին բաժիններում հանգամանորեն բացահայտում դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը: Առաջին շրջանը նա վերնագրել է «Անտիկ Հայաստանը մինչև Տիգրան Մեծ թագավորի դարաշրջանը (880–95 թթ. մ. թ. ա.)»: Մ. թ. ա. 880 թվականն ընդունել է ուրարտական թագավոր Արամի (կամ Արամեի) գահակալության սկիզբը, որը թագավորել է մինչև մ. թ. ա. 844 թվականը[12]: Այս բաժնում անդրադարձել է Ուրարտուին և նրա թագավորներին, Ասորեստանի հետ հարաբերություններին ու պատերազմներին, Ուրարտուի անկմանը, Նաիրիին կամ, ինչպես Ֆուադ Հասան Հաֆիզն է գրում, «Նաիրի առ Արմինիյա հավլա բուհայրա Վան» («Նաիրին կամ Հայաստանը Վանա լճի շուրջը»)[13], Պարթևստանի և հայ-պարթևական հարաբերություններին, Բիհիսթունի մ. թ. ա. 516 թ. արձանագրությանը, նշելով, որ այդ արձանագրությունում «պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է ալ-Արմինիյան»[14]: Արաբ պատմաբանը, հենվելով Մովսես Խորենացու վրա, որին նա համարում է «Հայկական Հերոդոտոս», հակիրճ տալիս է Հայկի պատմությունը, նրա պատերազմը Բելի (Բաալ) դեմ, տարած հաղթանակը և այլն: Բաժինն ավարտվում է Ալեքսանդր Մակեդոնացուն և Սելևկյաններին վերաբերող պատմությամբ, մ. թ. ա. 190 թ. Հայաստանի անկախության վերականգնումով, Արտաշիսյան դինաստիայի հաստատումով և Արտաշես Ի-ի ու նրան հաջորդած հայ թագավորների գործունեության լուսաբանությամբ՝ մինչև Տիգրան Երկրորդը:

Հայաստանի անտիկ պատմության երկրորդ շրջանը Ֆուադ Հասան Հաֆիզը վերնագրել է «Հայաստանը Տիգրան Մեծ թագավորի դարաշրջանում (մ. թ. ա. 95-55 թթ.)»[15]: Արաբ պատմաբանը հայոց արքայի գործունեությունը համարել է վերին աստիճանի կարևոր Հայաստանի բազմադարյան պատմության մեջ, նույնիսկ առանցքային, և անհրաժեշտ գտել նրա գահակալության 45 տարիներն առանձնացնել ու դիտարկել որպես ինքնուրույն, հատուկ դարաշրջան: Եվ նա դրա իրավունքն ուներ:

Եվ, վերջապես, Ֆուադ Հասան Հաֆիզը Հայաստանի անտիկ շրջանի պատմության երրորդ շրջանը, դարձյալ կապելով Տիգրան Մեծի անվան և գործունեության հետ, անվանել է «Հայաստանը Արտաշիսյան պետության դարաշրջանում՝ Տիգրան Մեծ թագավորից հետո (մ. թ. ա. 55 թ. – մ. թ. 15 թ.)»[16]: Այստեղ նա քննում է Հայաստանի միջազգային դրությունը, հարաբերությունները հարևան պետությունների և

---

[12] *Ֆ ո ւ ա դ Հ ա ս ա ն Հ ա ֆ ի զ. նշվ. աշխ., էջ 21-29:*

[13] *Նույն տեղում, էջ* 22: *Հաֆիզն այդ նույն տեղում մատնանշում է, որ «Նաիրին հայերի համար կոչվում էր Հայաստան»:*

[14] *Նույն տեղում, էջ 23:*

[15] *Նույն տեղում, էջ 30-37:*

[16] *Նույն տեղում, էջ 38-44:*

Հռոմեական կայսրության հետ, ներքաղաքական իրադրությունը և Արտաշիսյան դինաստիայի անկումն ու Հայաստանի անկախության կորուստը:

Այսպիսով՝ անտիկ Հայաստանի շուրջ երկուհարյուրամյա պատմությունը արաբ հետազոտողը կապում է հայոց արքա Տիգրան Մեծի անվան ու գործունեության հետ՝ նրան իրավացիորեն համարելով Արտաշիսյան Հայաստանի կենտրոնական դեմքը և իր հավասարը չունեցող պետական գործիչ: Միաժամանակ հարկ է նշել, որ Ֆուադ Հասան Հաֆիզը բնավ չի փորձում նսեմացնել Արտաշիսյան դինաստիայի մյուս թագավորներին: Ընդհակառակը, նա ընդգծում է նրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը հայոց պետության կայացման, հզորացման և անկախության պահպանման գործում, մասնավորապես, առանձնացնելով Արտաշես Ի-ին: Այդ հենքի վրա ավելի է շեշտվում Տիգրան Երկրորդի մեծությունը:

Հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցին հատուկ անդրադարձել է նաև Մարվան ալ-Մուդավարն իր «Հայերը պատմության ընթացքում» բովանդակալից և մեծածավալ (716 էջ) աշխատության մեջ: Սակայն նա, ի տարբերություն Ֆուադ Հասան Հաֆիզի, շեշտը դրել է Տիգրան Մեծի բուն թագավորության շրջանի պարբերացման վրա՝ Արտաշիսյան դինաստիայի շրջանակներում, որը սիրիացի պատմաբանը համարում է հայոց երկրորդ թագավորությունը՝ Երվանդունիների առաջին թագավորությունից հետո[17]: Ի դեպ, նշենք, որ ոչ միայն Մարվան ալ-Մուդավարը, այլև մնացած բոլոր արաբ հեղինակները, որոնք անդրադարձել են Հայաստանի պատմության անտիկ շրջանին, հայկական առաջին թագավորությունը համարում են Երվանդունիների, իսկ երկրորդը՝ Արտաշիսյան թագավորությունը:

Ալ-Մուդավարը թվարկում է Արտաշիսյան դինաստիայի բոլոր հայ թագավորներին («Մուլուք ալ-Արման մին ալ-ուսրաթի ալ-Արտաշիսիյա»), նշում նրանց թագավորության թվականները և հակիրճ լուսաբանում նրանցից յուրաքանչյուրի գործունեությունը: Այդ ամենից հետո, որը յուրատեսակ նախաբանի բնույթ է կրում, նա հանգամանորեն անդրադառնում է Տիգրան Մեծին և նրա դարաշրջանին, որը նա վերնագրել է «Հայկական կայսրությունը և Մեծն Տիգրան Երկրորդը. մ. թ. ա. 94–55 թթ.» («Ալ-Իմբրատուրիյա ալ-Արմանիյա վա Տիգրան ալ-Թանի ալ-Քաբիր. 94-55 կաբլա միլադի»)[18]: Արաբ պատմաբանը, ելնելով քաղաքական, ռազմական և տնտեսական իրողություններից, Տիգրան Մեծի կառավարման տարիները բաժանում է երկու շրջանի՝ «ֆաթրաթայն»: Առաջինը նա համարում է «Հայկական թագավորության ծաղկման և միավորման ու կայսրության ամրապնդման դարաշրջան»[19]: Ըստ նրա, այդ դարաշրջանն ընդգրկում է մ. թ. ա. 94–69 թթ.: Երկրորդ շրջանը Մարվան ալ-Մուդավարը կոչում է «Կայսրության թուլացման ու անկման և թագավո-

---

[17] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 146-161:*

[18] *Հեղինակը գրքի թե՛ վերնագրում, և թե՛ տեքստում Տիգրան Երկրորդի գահակալման սկիզբն առանց որևէ բացատրության նշում է մ. թ. ա. 94 թվականը, թեև պատմագրության մեջ հաստատապես ընդունված է, որ նա գահ է բարձրացել մ. թ. ա. 95 թ.:*

[19] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 149-153:*

ության իր սովորական սահմաններին վերադարձի դարաշրջան՝ մ. թ. ա. 69–55 թթ.»[20]:

Ալ-Մուդավարը, խոսելով առաջին շրջանի մասին, որը համարում է կայսրության ծաղկման դարաշրջան, առանձնացնում է երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ Տիգրան Մեծին հաջողվեց իրագործել Հայաստանի միավորումը մեկ պետության մեջ: Այդ առումով նա նախնառաջ նշում է Փոքր Հայքի միացումը Մեծ Հայքին: Այնուհետև պատմաբանն անդրադառնում է հայոց արքայի ռազմական հետագա գործողություններին և նշում, որ Տիգրան Մեծը մ. թ. ա. 88–78 թթ. Պարսկաստանի դեմ ձեռնարկած ռազմական արշավանքների ընթացքում «գործողության մեջ դրեց մի վիթխարի, լավ զինված բանակ», առաջ շարժվեց և հասավ մինչև Նինվե ու Արբիլ «և ազատեց Ատրպատականն ու Հաքարին պարսիկների տիրապետությունից և վերադարձրեց Հայաստանին, որը նախկինում տիրում էր դրանց, և դրանով նա ամբողջապես ավարտեց Հայաստանի միավորումը»[21]: Երկրորդ՝ ալ-Մուդավարը նշում է, որ դրանից հետո սկսվեց կայսրության ամրապնդման դարաշրջանը, որը, արաբ հեղինակի կարծիքով, Տիգրան Մեծից պահանջում էր «ընդարձակել իր նվաճումները»[22]: Եվ հայոց արքան, ինչպես ներկայացված է ալ-Մուդավարի ուսումնասիրության մեջ, նախ նվաճում է Միջագետքը, ապա իր տիրապետությունը հաստատում մի շարք փոքր երկրների վրա, որոնք գտնվում էին պարսիկների ենթակայության տակ, և նրանց հետ ստորագրում հաշտության պայմանագրեր: Այնուհետև նա գրավում է հյուսիսային Սիրիան և իր զորքերը շարժում դեպի Լիբանան, գրավում Սայդա և Սուր քաղաքներն ու Լիբանանի և Սիրիայի մնացած տարածքները: Այդ բոլոր տարածքները ենթակա էին Հայկական կայսրությանը[23]: Տիգրան Երկրորդը գրավում է նաև Կապադովկիան, ու դառնում «Մերձավոր Արևելքի ամենակարևոր տիրակալներից մեկը»[24]: Մարվան ալ-Մուդավարը ներկայացրել է նաև հայկական պետության սահմանները դրա ծաղկման շրջանում, նշելով, որ Տիգրան Մեծի «կայսրությունը տարածվում էր արևելքում՝ Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովը՝ արևմուտքում, և հյուսիսից՝ Կովկասից մինչև Պաղեստին և Կիլիկիա՝ հարավ և հարավ-արևմուտքում»[25]: Ինչ վերաբերում է Տիգրան Մեծի թագավորության երկրորդ շրջանին՝ կայսրության թուլացմանն և անկմանը, ապա արաբ պատմաբանը դրանք կապում է տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների, մասնավորապես, Հռոմեական կայսրության նվաճողական ակտիվ քաղաքականության հետ, որի շահերը հակասում էին Հայկական

---

[20] *Նույն տեղում, էջ 149, 153-157: Հեղինակն այստեղ օգտագործում է «ադիյա» բառը, որը արաբերենում երկու իմաստ ունի՝ «սովորական» և «նորմալ»: Վերոգրյալ նախադասությունը կարելի է թարգմանել նաև՝ «Հայկական կայսրության վերադարձը հայկական թագավորության նորմալ սահմաններին»:*

[21] *Նույն տեղում, էջ 151:*

[22] *Նույն տեղում:*

[23] *Նույն տեղում, էջ 152:*

[24] *Նույն տեղում:*

[25] *Նույն տեղում:*

կայսրության շահերին, հայոց արքայի ռազմական անհաջողությունների, Հայաստանի ներքաղաքական իրադրության, առաջին հերթին նրա որդու՝ թագաժառանգ Տիգրանի դավաճանական գործողությունների հետ և այլն[26]*:*

Հայաստանի անտիկ շրջանի պատմության պարբերացման հարցը տեղ է գտել նաև Սամիր Արբաշի «Հայաստան. հող և ժողովուրդ» գրքում: Ընդ որում, նրա կատարած պարբերացումն ավելի մոտ է Մարվան ալ-Մուդավարի, քան Ֆուադ Հասան Հաֆիզի պարբերացմանը: Դրանում դժվար չէ համոզվել, ծանոթանալով նրա աշխատության երկրորդ բաժնին, որը վերնագրված է «Արմինիյա մին 95 կաբլա միլադի իլա 15 միլադի»՝ «Հայաստանը մ. թ. ա. 95 թվականից մինչև մ. թ. 15 թվականը»[27]*:*

Արաբ պատմաբանները, լուսաբանելով Տիգրան Մեծի դարաշրջանը և նրա ռազմական ու պետական-քաղաքական գործունեությունը, քննարկում են նաև հետևյալ կարևոր հարցը՝ թե որոնք էին հայոց արքա Տիգրան Երկրորդի Հայաստանն ընդարձակելու, նրա «ծավալապաշտական (թավասա) քաղաքականության» պատճառները և նպատակը: Նրանց պատասխանը որոշ իմաստով բավական անսպասելի է, քանի որ այդ քաղաքականության արմատները նրանք փնտրում և գտնում են Հայաստանը օտար ազդեցությունից ձերբազատելու և լրիվ անկախ պետության վերածելու հայոց արքայի ձգտումների մեջ: Այդ տեսակետը շատ հստակ արտահայտված է Սամիր Արբաշի աշխատության մեջ, որտեղ ասվում է. «Տիգրան Երկրորդ կամ Մեծ արքան գահակալման հենց սկզբից գործադրեց իր բոլոր ջանքերը հայկական թագավորությունն ընդարձակելու և վերջ տալու հարևան երկու մեծ պետությունների ազդեցությանը, որպիսիք էին Սելևկյան և պարսկական պետությունները»[28]*: Այս նույն տեսակետն ենք գտնում նաև Ֆուադ Հասան Հաֆիզի, Մարվան ալ-Մուդավարի և արաբ այլ հետազոտողների մոտ: Վերջիններս դա համարում են մի անհրաժեշտ քայլ, որի շնորհիվ Հայաստանը փոքր պետությունից աստիճանաբար վերածվում էր մեծ կշիռ և ազդեցություն ունեցող անկախ երկրի: Այդ տեսանկյունից են պատմաբանները գնահատում նաև Տիգրան Մեծի հետագա բոլոր քայլերը, մասնավորապես, դաշնակցելը Պոնտոսի թագավորությանը և ամուսնությունը Պոնտոսի թագավոր Միհրդատի VI-ի դստեր՝ Կլեոպատրայի հետ, մղած հաղթական մի շարք պատերազմները, որոնք «հնարավոր դարձրին ընդարձակվելը (Հայաստանի – Ն. Հ.) դեպի արևելք և հարավ»*[29]*, պայքարը Հռոմեական կայսրության հետ և այլն:*

Արաբ պատմաբանները հատուկ ուշադրություն են դարձրել Տիգրան Մեծի ներքին քաղաքականության մի շարք կողմերի լուսաբանմանը՝ կապված Հայաստանի տնտեսական զարգացման, վարչական բաժանման, երկրի կառավարման համակարգի բարելավման, բանակի ամրապնդման հետ և այլն: Նրանք նշում են, որ Տիգ-

---

[26] *Նույն տեղում, էջ 153-157:*

[27] *Ս ա մ ի ր Ա ր բ ա շ. նշվ. աշխ., էջ 25-27:*

[28] *Նույն տեղում, էջ 25:*

[29] *Նույն տեղում:*

րան Մեծի թագավորության շրջանում ավելացավ ոսկու, արծաթի, երկաթի և այլ մետաղների արդյունահանումը: Հայոց արքան իր քաղաքականությամբ մեծապես նպաստում էր գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Նրա ուշադրության կենտրոնում էին գտնվում երկրի վարչական կառավարման խնդիրները: Ինչպես նշում է Սամիր Արբաշը, Տիգրան Երկրորդն իր թագավորությունը բաժանեց 20 վիլայաթների՝ մարզերի և երկրի վարչական կառավարումը հեշտացնելու ու բարելավելու նպատակով[30]: Արաբ հեղինակը հայոց թագավորի վարչական բարելավումների և վերակառուցումների մեջ է ներառում «Մեծ թագավորությանն արժանի նոր մայրաքաղաքի հիմնումը, որը անվանվեց Տիգրանակերտ»[31]:

Արաբ հեղինակները Տիգրան Մեծի բարեփոխումներից են համարում նաև բանակի կազմակերպումը, որին մշտապես մեծ ուշադրություն է դարձրել: Նրա արտաքին և ռազմական ակտիվ քաղաքականությունը պահանջում էր ունենալ մեծաթիվ բանակ: Ուստի, Տիգրան Մեծն իր բանակի թիվը, ըստ արաբ պատմաբանների տվյալների, հասցնում է մոտ 100 հազարի [32], որը փոքր թիվ չէր իր ժամանակի, այդ թվում և Հայաստանի համար: Բանակը կազմված էր հետևակից, որի հենարանը կամ կորիզը գլխավորապես տեղի լեռնցի հայ զինվորներն էին, և հեծելազորից[33] :

Քննարկելով Տիգրան Երկրորդի՝ իր թագավորության կազմի մեջ նոր տարածքներ մտցնելու հարցը, արաբ պատմաբանները չեն շրջանցել նաև հայոց արքայի կողմից արաբական երկրները գրավելու իրողությունը: Նրանք՝ համարյա բոլորը, մասնավորապես Ֆուադ Հասան Հաֆիզը, Մարվան ալ-Մուդավարը, Սամիր Արբաշը, Ուսման ալ-Թուրքը և ուրիշներ, այս կամ այն չափով, լուսաբանում են իրենց համար կարևոր պատմական այդ իրողությունը: Վերը մենք խոսել ենք Մարվան ալ-Մուդավարի մասին, որը նշում է արաբական երկրների՝ Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Միջագետքի գրավումը որպես կարևոր հանգրվան Տիգրան Մեծի թագավորությունը կայսրության վերածվելու ճանապարհին[34]: Ընդ որում, հեղինակը հարկ է համարել նշել, որ Սիրիայի պարագայում իրողությունը յուրահատուկ էր: Նա, հենվելով միջնադարյան պատմիչների տեղեկությունների վրա, գրում է, որ Սիրիան պառակտված էր և խռովահույզ, քանի որ զահի համար ուժեղ պայքար էր գնում սիրիական թագուհու և իշխանների միջև: Սիրիացիները ստեղծում են «Հայրենասիրական կուսակցություն», որը որոշում է դիմել օտար որևէ պետության միջամտության՝ դուրս գալու համար ստեղծված ճգնաժամային իրադրությունից. «Եվ նա, ով իրականացրեց այդ, ինքը արքայից արքա Տիգրանն էր, որը Սիրիա մտավ մ. թ. ա. 83 թ.»[35]: Այսպիսով, ալ-Մուդավարն ընդունում է, որ հայոց արքայի մուտքը Սիրիա որոշ իմաստով եղել է սիրիական հայրենասիրական ուժերի հրավերի կամ

---

[30] *Նույն տեղում, էջ 25-26:*
[31] *Նույն տեղում, էջ 26:*
[32] *Նույն տեղում, էջ 25:*
[33] *Նույն տեղում, էջ 25-26:*
[34] *Տե՛ս Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 151:*
[35] *Նույն տեղում:*

խնդրանքի արգասիքն, որը, անշուշտ, համընկել է Տիգրան Երկրորդի քաղաքական ձգտումների հետ:

Արաբական երկրները Տիգրան Մեծի կայսրության կազմի մեջ մտցնելու հարցին առավել հանգամանորեն անդրադարձել է Ուսման ալ-Թուրքն իր «Էջեր հայ ազգի պատմությունից» աշխատության մեջ, միաժամանակ ներկայացնելով հետաքրքիր մի շարք մանրամասնություններ: Այդ հարցը նա քննարկում է ժամանակի միջազգային հարաբերությունների և արաբական երկրներում տիրող իրադրության հենքի վրա, որը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացում կազմել հայոց արքայի ռազմական հաջողությունների պատճառների մասին: Արաբ հեղինակը երկու պատճառ է նշում: Առաջին՝ Հայաստանը դարձել էր հզոր պետություն, որն ուներ հզոր բանակ, խելացի ղեկավար. վերջինս կուտակել էր հաղթական պատերազմ վարելու հսկայական փորձ ու հմտություն և օժտված էր բարենպաստ պայմաններից օգտվելու մեծ տաղանդով: Երկրորդ՝ Պարսկաստանը, Պոնտական թագավորությունը և տարածաշրջանի մյուս մանր ու թույլ պետություններն ի վիճակի չէին դիմագրավելու Տիգրան Մեծին և կանխելու նրա հաղթարշավը: Միակ պետությունը, որը կարող էր դա անել՝ Հռոմեական կայսրությունն էր, որը, սակայն, զբաղված էր այլ հարցերով և ի վիճակի չէր անհրաժեշտ ուշադրություն դարձնել ու կենտրոնանալ արևելյան խնդիրների վրա: Եվ հայոց թագավորը փայլուն օգտվեց պատմական այդ բարենպաստ հնարավորությունից և իր պետությանը միացրեց արաբական մի շարք երկրներ: Ուսման ալ-Թուրքը, անդրադառնալով հայկական բանակի կողմից Սիրիան, Լիբանանը, Միջագետքը և Պաղեստինը գրավելու ու հայկական կայսրության մեջ մտցնելու պատմությանը, նշում է նրա սահմանները, որը հիմնականում համընկնում է Մարվան ալ-Մուդավարի նշած սահմաններին՝ փոքր ճշգրտումներով: Նա գրում է, որ հայկական կայսրությունը «հյուսիսում հասնում էր մինչև Կասպից ծովի ափերը, արևմուտքում մինչև Կապադովկիա, արևելքում մինչև Իրաք և հարավում նրա ազդեցությունը հասնում էր մինչև հրեաների երկիրը՝ այն բանից հետո, երբ գրավեց (Տիգրան Մեծը –Ն. Հ.) Փյունիկիան և Սիրիան»[36]:

Ուսման ալ-Թուրքը մեզ հայտնի արաբ հեղինակներից միակն է, որ երկու ենթաբաժին է հատկացրել Տիգրան Մեծի՝ Սիրիայում գտնվելու հարցին՝ «Տիգրան Մեծ արքան Դամասկոսում» («Ալ-Մալիք Տիգրան ալ-քաբիր ֆի Դիմաշկ»)[37] և «Տիգրան Մեծ արքան Հալեբում» («Ալ-Մալիք Տիգրան ալ-Քաբիր ֆի Հալիբ»)[38]: Նշելով, որ Տիգրան Մեծը «այդ ժամանակ իր տիրապետությանը ենթարկեց Դամասկոս քաղաքը»[39], պատմաբանը, այնուհետև, գրում է, որ երբ Տիգրան Մեծը մտավ Դամասկոս, քաղաքի անունը Դիմիտրյաս էր՝ ի հիշատակ Դիմիտրյաս Երրորդի, որը կառավարել է մ. թ. ա. 95–88 թթ: Եվ, ահա, Տիգրան Մեծի տիրապետության օրոք քաղաքը սկսել է կրել Դամասկոս անունը[40]: Անդրադառնալով Տիգրան Մեծի՝ Դամասկոսում

---

[36] *Ուսման ալ-Թուրք. նշվ. աշխ., էջ 56:*
[37] *Նույն տեղում, էջ 56-57:*
[38] *Նույն տեղում, էջ 57:*
[39] *Նույն տեղում, էջ 56:*
[40] *Նույն տեղում, 56-57:*

և Հալեպում գտնվելուն, Ուսման ալ-Թուրքը, հատկապես ընդգծում է արքայի անունով բրոնզե դրամներ հատելու հանգամանքը: Նա նկարագրում է նաև այդ դրամները, որոնք կրել են Տիգրան Երկրորդի պատկերը, արքայական թագը և թագավորական այլ խորհրդանիշեր: Արաբ հեղինակը հարկ է համարել իր գրքում զետեղել Տիգրան Երկրորդի դրամներից երկուսի լուսանկարները, որոնք հատվել են Դիմիտրյաս-Դամասկոսում[41]:

Արաբ հեղինակները յուրատեսակ մոտեցում են ցուցաբերել արաբական երկրները Հայկական կայսրության մեջ ներառելու գնահատականի հարցում: Ուսումնասիրելով այդ խնդիրը՝ մենք այդպես էլ չհանդիպեցինք քննադատական, առավել ևս դատապարտող որևէ գնահատականի: Կարելի է ասել, որ նրանք հարցի լուսաբանումը չեն քաղաքականացրել, առավել ևս չեն փորձել այսօրվա աչքերով դիտարկել և դրան համապատասխան բացասական գնահատականներ տալ: Խնդրին նրանք մոտեցել են որպես պատմական իրողություն, որպես կայացած փաստ: Դեռ ավելին. Տիգրան Մեծի կողմից արաբական երկրները գրավելու հանգամանքը չի խանգարել ժամանակակից արաբ պատմաբաններին բարձր գնահատելու նրա արտաքին քաղաքականությունը, այդ թվում և ռազմական գործողությունները: Ֆուադ Հասան Հաֆիզը և Սամիր Արբաշը, ինչպես նշել ենք, Տիգրան Երկրորդի ծավալապաշտական քաղաքականությունը համարում են անհրաժեշտություն Սելևկյան ու Պարսից պետության ազդեցությունից Հայաստանն ազատագրելու և այն ուժեղ տերության վերածելու տեսանկյունից[42]: Նրանց գնահատականին շատ մոտ է նաև Ուսման ալ-Թուրքի տեսակետը: Վերջինս ուղղակի հաստատում է, որ «Արյունալի պատերազմները հայերը մղել են իրենց ազատությունը և անկախությունը պաշտպանելու» համար[43]: Համանման տեսակետներ ենք գտնում նաև Սալիհ Զահիր ալ-Դինի, Մարվան ալ-Մուդավարի և արաբ այլ պատմաբանների ուսումնասիրություններում:

Մարվան ալ-Մուդավարը և Ուսման ալ-Թուրքը փորձել են որոշել, թե ինչքան է կազմել Հայկական կայսրության տարածքը: Ըստ ալ-Մուդավարի, Տիգրան Մեծի ժամանակ «Նվաճումների միջոցով անծայրածիր կայսրության վերածված հայկական պետության տարածքը հասել է 700 000 քառակուսի կիլոմետրի»[44]: Իսկ Ուսման ալ-Թուրքը, կոնկրետ չնշելով տարեթիվը, սակայն նկատի ունենալով պատմական նույն դարաշրջանը, գրում է, որ Հայաստանի «տարածքը մոտավորապես հավասար էր Ֆրանսիայի տարածքին»[45]: Այդ տարբերությունը, հավանաբար, արդյունք է այն հանգամանքի, որ թեև երկու հեղինակները նշել են նույն պատմական դարաշրջանը, սակայն նկատի են ունեցել դրա տարբեր ժամանակահատվածները:

Անդրադառնանք նաև արաբական ժամանակակից պատմագրության մեջ Տիգրան Երկրորդի և նրա թագավորության տիտղոսավորման հարցերին:

---

[41] *Նույն տեղում, էջ 56-ի և 57-ի միջև:*

[42] *Ֆ ո ւ ա դ Հ ա ս ա ն Հ ա ֆ ի զ. նշվ. աշխ., էջ 30, Ս ա մ ի ր Ա ր բ ա շ. նշվ. աշխ., էջ 25:*

[43] *Ո ւ ս մ ա ն ա լ - Թ ո ւ ր ք. նշվ. աշխ., էջ 46:*

[44] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 149:*

[45] *Ո ւ ս մ ա ն ա լ - Թ ո ւ ր ք. նշվ. աշխ., էջ 31:*

Տիտղոսի հարցը պատմական բոլոր ժամանակաշրջաններում կարևորագույն հարցերից մեկն է եղել, ինչպես կոնկրետ տվյալ անձի և տվյալ պետական կազմավորման, այնպես էլ միջազգային իրավունքի տեսակետից: Պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ այդ հարցում թույլ տրված միտումնավոր կամ պատահական սխալները առիթ են հանդիսացել թշնամանքի և լարվածության: Այս տեսանկյունից խնդրին մոտենալիս տեսնում ենք, որ արաբ պատմաբաններին բնորոշ է օբյեկտիվ մոտեցում ցուցաբերելու ձգտումը այդ նուրբ հարցի նկատմամբ: Նրանք հայոց արքայի և հայոց թագավորության հարցում հստակորեն երկու փուլ են սահմանագծում: Առաջին շրջանում Տիգրան Երկրորդը, Արտաշիսյան դինաստիայի չորրորդ թագավորը, նրանց համար Հայաստանի լեգիտիմ գահակալն է՝ թագավոր՝ մալիք տիտղոսով, իսկ պետությունը՝ Հայաստանի թագավորություն՝ Մամլաքաթ ալ-Արմանիյա: Տիտղոսի առումով այս կարգավիճակն ուներ Հայաստանը և նրա արքա Տիգրան Երկրորդը մինչև վերջինիս կողմից Հայաստանի տարածքներն ընդարձակելը: Այդ կապակցությամբ Մարվան ալ-Մուդավարը գրում է, որ «Հայկական պետությունը նվաճումների միջոցով վերածվեց Հայկական կայսրության»՝ «Ալ-Իմբրատուրիյա ալ-Արմանիյա»[46]: Դրանով սկսվում է հայոց պետականության երկրորդ փուլը՝ կայսրության շրջանը*:*

Այդ նույն տեսակետն են արտահայտում արաբ բոլոր հեղինակները, որոնք անդրադարձել են այդ խնդրին:

Սակայն հարցը միայն նոր տարածքներ նվաճելու մեջ չէր, թեև դա շատ կարևոր իրողություն էր: Պակաս կարևոր չէր նաև հետևյալ հանգամանքը: Տիգրան Երկրորդը կարևոր հաղթանակներ տարավ նաև Պարսկաստանի դեմ, որից հետո, ինչպես նշում է Սամիր Արբաշը, «Նա մ. թ. ա. 83 թվականին իրեն հայտարարեց «արքայից արքա»՝ «մալիք ալ-Մուլուք»[47]: Այդ նույն հանգամանքն է նշում և Մարվան ալ-Մուդավարը, գրելով, որ Տիգրան Երկրորդն իր տիրապետությունը հաստատեց փոքր տիրակալների, այսինքն՝ թագավորների վրա, որոնք գտնվում էին պարսկական թագավորների գերիշխանության ներքո, նրանց հետ կնքեց խաղաղության պայմանագրեր և «նվաճեց արքայից արքայի տիտղոսը, որը կրում էին միայն պարսիկ թագավորները»[48]: Նա այդ իրավունքը նվաճեց սրով և բազում հաղթանակների շնորհիվ: Հենց այդ ժամանակվանից էլ Տիգրան Երկրորդը «Արքայից արքա» տիտղոսին զուգահեռաբար կրել է նաև «Մեծ» տիտղոսը՝ «Հայոց արքա Տիգրան Մեծ»:

Ուրեմն, ինչպես իրավացիորեն նկատել են արաբ հեղինակները, հայկական թագավորության վերածումը Հայկական կայսրության մի երևույթ էր, որը տարածքային նվաճումների և հայոց արքա Տիգրան Երկրորդի «արքայից արքա» դառնալու արդյունք էր: Միայն այդ երկուսի միասնությունն է, որ իրավունք է տալիս խոսելու Հայկական կայսրության կազմավորման և գոյության մասին: Եվ եթե հիմք ընդունենք Սամիր Արբաշի կողմից նշված մ. թ. ա. 83 թ.՝ որպես Տիգրան Երկրորդի «ար-

---

[46] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 149:*

[47] *Ս ա մ ի ր Ա ր բ ա շ. նշվ. աշխ., էջ 25:*

[48] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 151:*

քայից արքայի» անվանակոչության տարեթիվ, ապա, ըստ արաբ հեղինակների, հայկական թագավորության վերածումը Հայկական կայսրության տեղի է ունեցել մ. թ. ա. 83 թ.: Նույնը կողմնակիորեն հաստատում է նաև Մարվան ալ-Մուդավարը, երբ գրում է, որ մ. թ. ա. 83 թ. հայոց արքայից արքա Տիգրան Մեծը մտավ Սիրիա: Դա նշանակում է, որ նա այդ ժամանակ արդեն արքայից արքա էր և ընդունվել էր որպես կայսր: Ասվածը հաստատում է նաև Ուսման ալ-Թուրքը, որն իր աշխատության կարևոր ենթաբաժիններից մեկը վերնագրել է «Տիգրան Երկրորդ Մեծի, որը կրում էր արքայից արքայի և Ասիայի Մեծ արքայի տիտղոսը, կայսրությունը» ՝ «Իմբրատուրիյա Տիգրան ալ-Թանի ալ-Քաբիր ալ-մուլակիբ մալիք ալ-մուլուք վա մալիք Ասիյա ալ-ազիմ»[49]:

Այժմ խոսենք Տիգրան Երկրորդի «Ասիայի Մեծ արքա» տիտղոսի մասին: Պատմագիտական նյութը, որի վրա հենվում են արաբ հեղինակները, հաստատում է, որ Տիգրան Մեծը կրել է ոչ միայն «Արքայից արքա», այլև «Ասիայի Մեծ արքա» տիտղոսը: Դժվար է ասել, թե երբ է նրան այդ տիտղոսը շնորհվել: Մարվան ալ-Մուդավարն այս հարցում վկայակոչում է հռոմեական հայտնի հռետոր, իրավագետ և Հռոմի կոնսուլ Ցիցերոնին: Ահա այն ՝ «Հռոմեական կոնսուլ Ցիցերոնը Տիգրան II-ին կոչում էր «Ասիայի Մեծ Թագավոր» («Մալիք Ասիյա ալ-ազիմ»)»[50]: Նրան «Ասիայի մեծ թագավոր» են անվանում նաև Ֆուադ Հասան Հաֆիզը, Սամիր Արբաշը, Ումար ալ-Դակակը և արաբ այլ հեղինակներ: Իսկ Մարվան ալ-Մուդավարը, հետևելով Ցիցերոնին, Տիգրան Երկրորդին անվանում է «Հայկական թագավորներից ամենամեծը» ՝ «Ա'զամ մուլուք արմանի»[51]: Ըստ էության, Տիգրան Երկրորդն այդպես է գնահատվել Իսլամական Հանրագիտարանում, որտեղ գրված է, որ «Հայաստանը Տիգրանուս Երկրորդ Մեծի դարաշրջանում լայն հեղինակություն և ազդեցություն ունեցող երկիր էր Կենտրոնական Ասիայում»[52]:

Հավանաբար, ընթերցողը նկատեց, որ երբ խոսվում է Տիգրան Երկրորդի ՝ որպես հայոց թագավորի և Հայկական կայսրության տիրակալի մասին, արաբ հեղինակներն օգտագործում են քաբիր *բառը ՝ «Մալիք Տիգրան ալ-Թանի ալ-Քաբիր», այսինքն ՝ «Տիգրան Երկրորդ Մեծ արքա»: Սակայն երբ խոսքը նրա Ասիայի տիրակալ լինելու մասին է, օգտագործվում է* ազիմ *եզրը ՝ «Մալիք Ասիյա ալ-ազիմ»: Արաբերեն երկու բառերն էլ, որոնք տվյալ դեպքում տիտղոսակազմ նշանակություն ունեն,*

---

[49] *Ո ւ ս մ ա ն ա լ - Թ ո ւ ր ք. նշվ. աշխ., էջ 47:*

[50] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 149:*

[51] *Նույն տեղում: Նշենք նաև, որ* ա'զամ*-ը* ազիմ*-ի գերադրական աստիճանն է:*

[52] *Ալ-Արման ֆի դահիրաթի ալ մաարիֆ ալ-իսլամիյա-Դահիրա ալ-Մաարիֆ ալ-Իսլամիյա. Ալ-նասախա ալ-արաբիյա. Ի'դադ վա թահրիր Իբրահիմ Զաքի Խուրշիդ, Ահմադ ալ-Սանթանավի, Աբդ ալ-Համիդ Յունուս, Ալ-մուջալադ ալ-սալիս. IV, (արաբերեն). Հայերը Իսլամական Հանրագիտարանում: Արաբերեն ընդօրինակումը, պատրաստումը և խմբագրումը Իբրահիմ Զաքի Խուրշիդի, Ահմադ ալ-Սանթանավիի, Աբդ ալ-Համիդ Յունուսի, Երրորդ հատոր, IV, 1992, էջ 38:*

Նշենք նաև, որ այստեղ «Կենտրոնական Ասիան» չպետք է շփոթել խորհրդային աշխարհագիտության մեջ ընդունված «Միջին Ասիայի» հետ: Տվյալ դեպքում «Կենտրոնական Ասիայի» տակ հասկացվում է Ասիա մայրցամաքի ամբողջ կենտրոնական տարածաշրջանը ՝ Մերձավոր և Միջին Արևելքը, Փոքր Ասիան, Միջին Ասիան և հարակից երկրները:

թարգմանվում են որպես մեծ*: Սակայն, իրականում, դրանք ունեն երանգային տարբերություններ, որը հայերենում իր համարժեքը չունի, մինչդեռ արաբերենում, ռուսերենում, անգլերենում և մի շարք այլ լեզուներում կա դրանց տարբերակման հնարավորությունը: Ռուսերենում* քաբիրի *համարժեքը* большой *բառն է, որի հայկական համարժեքը* մեծն *է:* Քաբիր *բառն այդ նույն՝* մեծ*, իմաստով է օգտագործվում նաև արաբերենում: Իսկ ինչ վերաբերում է* ազիմ *բառին, ապա նրա ռուսերեն համարժեքը* великий *բառն է, որը նույն իմաստով է օգտագործվում նաև արաբերենում, ինչպես նաև անգլերենում՝* big *և* great*, սակայն, ցավոք, բացակայում է հայերենում: Հետևաբար, երբ Ցիցերոնը և նրա օրինակով ար աբ ժամանակակից հեղինակները Տիգրան Երկրորդին կոչում են «Մալիք Ասիյա ալ-ազիմ», ապա նրա ճշգրիտ ռուսերեն թարգմանությունը կլինի՝* “Тигран, великий царь Азии”.

Վերոգրյալը գալիս է մի ավելորդ անգամ վկայելու և հաստատելու այն պատմական անհերքելի իրողությունը, որ հայոց արքա Տիգրան Երկրորդը եղել է իր դարաշրջանի համաշխարհային ամենաականավոր մեծություններից մեկը, որը ձեռնոց է նետել իր երկու ամենավտանգավոր ախոյաններին, և նրանց գոյության պայմաններում, սրով ու խելքով, կարողացել է ստեղծել Հայկական կայսրություն և կրել ամենաբարձր տիտղոսները, որի մասին անտիկ շրջանում շատ տիրակալներ են երազել, բայց որին շատ քչերն են արժանացել: Այդ քչերի մեջ առաջիններից է Արտաշիսյան դինաստիայի չորրորդ արքա Տիգրան Երկրորդը, նույն ինքը՝ Հայոց արքա Տիգրան Մեծը *և նույն ինքը՝* “Тигран, *Великий* царь Азии”*:*

Այս հոդվածը պատրաստելիս մեր առջև շատ համեստ խնդիր էինք դրել՝ տեղյակ պահել հայ ընթերցողին, որ 18 անկախ պետություն և 300 միլիոնից ավելի բնակչություն ունեցող մեր բարեկամ արաբ ժողովրդի պատմագիտությունն իր ծանրակշիռ, մնայուն, հարգալից և գիտականորեն առարկայական խոսքն է ասել հայոց արքա Տիգրան Մեծի և նրա ստեղծած Հայկական կայսրության մասին: Արաբական ժամանակակից պատմագիտության ուսումնասիրության արդյունքներն առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում, որը, ինչպես հույս ունենք, կհարստացնի Հայաստանի հին շրջանի պատմության աղբյուրագիտական հենքը և կնպաստի հայ ժողովրդի անանց հպարտությունը կազմող արքայից արքայի պետական-քաղաքական հմայիչ դիմապատկերի ամբողջացմանը:

Մեզ մնում է սույն հոդվածն ավարտել Մարվան ալ-Մուդավարի՝ դառը ճշմարտություն պարունակող հետևյալ խոսքերով. Տիգրան Մեծի ստեղծած կայսրությունը «եղավ առաջին և վերջին կայսրությունը հայ ազգի պատմության մեջ»[53]*:*

Ի՞նչ իմանաս…

---

[53] *Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո ւ դ ա վ ա ր. նշվ. աշխ., էջ 149:*

ТИГРАН ВЕЛИКИЙ И АРМЯНСКАЯ ИМПЕРИЯ В СОВРЕМЕННОЙ АРАБСКОЙ ИСТОРИОГРАФИИ

НИКОЛАЙ ОГАНЕСЯН

Р е з ю м е

С середины XX столетия наблюдается повышенный интерес со стороны арабской историографии к армянской проблематике. В Ливане, Сирии, Египте, Ираке и Палестине друг за другом появились монографические исследования и научные статьи арабских авторов, посвященные истории Армении и армяно-арабским историческим, политическим и культурным связям. Исследователей интересует освещение деятельности армянского царя Тиграна Великого (95–55 до н. э.) и роль основанной им Армянской империи в ближневосточном геополитическом регионе как важный военный и политический фактор той эпохи. С этой точки зрения выделяются монографические работы Фуада Хасана Хафиза, Марвана ал-Мудавара, Усмана ал-Турка, Самира Арбаша, Салиха Захр ал-Дина, Умара ал-Дукаки и других. В их трудах освещены почти все стороны деятельности четвертого царя Арташидской династии Тиграна Великого, все ключевые вопросы его внутренней и внешней политики. И нет вопроса, связанного с личностью и деятельностью армянского царя царей, который остался бы вне поля зрения современных арабских историков. Арабские авторы придают большое значение проблеме периодизации древней истории Армении. Для них Тигран II является главным ориентиром при рассмотрении вопросов периодизации. Египетский историк Фуад Хасан Хафиз в книге «История Армении от начала до наших дней» делит историю Армении на три периода – античная Армения до эпохи царя Тиграна Великого (880–95 до н. э.), в эпоху царя Тиграна Великого (95–55 до н. э.) и в эпоху после Тиграна Великого (55 до н. э. – 15 н. э.). А сирийский автор Марван ал-Мудавар в работе «Армения в историческом процессе» рассматривает периодизацию эпохи царствования самого Тиграна Великого, разделив ее на два этапа – на «эпоху расцвета Армянского царства, его объединения и укрепления империи (94–69 до н. э)» и на «эпоху ослабления и падения империи и возврата царства к своим обычным границам (69–55 до н. э)». В арабской историографии самой большой заслугой Тиграна Второго считается завершение им объединения Армении в единое государство и превращение ее в империю и важный политический и военный фактор Передней Азии. По мнению арабских авторов, которое четко сформулировано Усман ал-Турком, «кровавые войны армяне вели ради защиты своей свободы и независимости». Аналогичного мнения придерживается Салих Захр ал-Дин, Марван ал-Мудавар и другие. Арабские историки не обходят исторический факт включения ряда арабских стран в состав Армянской империи. Этот вопрос они освещают без излишних эмоций. В их трудах не обнаруживается какой-либо критической и, тем более, осуждающей оценки. Можно сказать, что они не политизируют освещение этого вопроса, а рассматривают его как исторический факт и не более того. Завоевание Тиграном Великим арабских стран не помешало современным арабским историкам дать высокую оценку внешней политике и военным операциям армянского царя. В трудах арабских историков определены границы Армянской империи. Усман ал-Турк находит, что границы Армянской империи «доходили на севере до берегов Каспийского моря, на западе до Каппадокии, на востоке до Ирака и на юге ее влияние доходило до страны евреев, после того, как он (Тигран Вели-

кий.– *Н. О.*) завоевал Финикию и Сирию». Фактически такого же мнения придерживаются Самир Арбаш и Марван ал-Мудавар. Например, ал-Мудавар отмечает, что империя Тиграна Великого «распространялась от Каспийского моря на востоке, до Средиземного моря на западе, от Кавказа на севере, до Палестины и Киликии на юге и юго-западе». По данным арабских исследователей общая площадь Армянской империи в период ее расцвета составляла 700 тыс. кв. км. В арабской историографии освещены также ключевые вопросы внутренней политики Тиграна Великого – экономические, административные, военные, отдавая должное таланту и усилиям армянского царя. Арабские авторы дают высокую оценку армии Тиграна Великого, которая состояла из двух родов войск – пехоты и конницы, отмечая, что она была сильной, хорошо вооруженной, организованной и грозной армией, число которой доходило до 100 тысяч солдат – пехотинцев и всадников. Арабские авторы уделяют исключительное внимание титулу Тиграна Второго и названию армянского государства. Они четко разделяют два этапа. На первом этапе Тигран Второй для них повелитель Армении, носивший титул «малик» – «царь» или «король», а государство называлось «Мамлакат ал-Армания» – «Армянское королевство» или «Армянское царство». Тигран Второй носил этот титул до расширения границ Армении и включения в ее состав новых территорий. По этому поводу Марван ал-Мудавар пишет, что «Армянское государство путем завоевания превратилось в Армянскую империю». С этого момента происходит изменение как в титуле царя Тиграна, так и в названии армянского государства. Изменение в титуле арабские авторы связывают также с блестящими победами Тиграна Второго над Персией, после чего, как отмечает Самир Арбаш, «он в 83 г. до н. э. объявил себя «Малик ал-мулук» – «Царь царей». Параллельно Тигран носил титул «Великий». Таким образом, он официально носил титул «Армянский царь Тигран Великий, царь царей». Соответственно, как отмечают Фуад Хасан Хафиз, Марван ал-Мудавар, Самир Арбаш, Салих Захр ал-Дин и другие арабские историки, произошло изменение в названии армянского государства. Оно стало называться «Империя царя царей Тиграна Второго Великого». Но это еще не все. В дальнейшем его титулы обогатились еще одним названием, который ввел римский консул и всемирноизвестный оратор Цицерон. По этому поводу ал-Мудавар свидетельствует, что «римский консул Цицерон называл Тиграна Второго «Великим царем Азии». Формулировка Цицерона безоговорочно принята современными арабскими авторами. Тигран Великий так именован и в Исламской энциклопедии –«Армения в эпоху Тиграна Второго Великого была страной, имеющей высокий авторитет и широкое влияние в Центральной Азии». Арабские историки, объединив все титулы Тиграна, называют его «Тигран Второй Великий, царь царей и великий царь Азии», а его страну Армению – «Империей Тиграна Второго, царя царей и великого царя Азии». Тигран Великий признан современной арабской историографией одним из выдающихся, мудрых, талантливых царей-императоров, равных которому в свое время было очень мало. Он один из тех, кто повлиял на ход исторического развития целой эпохи и своей деятельностью определил основные ее направления. Арабский материал, результаты исследований и наблюдений арабских историков, которые впервые вводятся в научный оборот, обогатят источники по древней истории Армении и помогут составить более цельное представление о политическом портрете Тиграна Великого, царя царей, великого царя Азии и созданной им Армянской империи.

TIGRAN THE GREAT AND THE ARMENIAN EMPIRE IN THE CONTEMPORARY ARAB HISTORIOGRAPHY

NIKOLAY HOVHANNISYAN

S u m m a r y

Since mid-20th century Arab historians in Lebanon, Syria, Egypt, Iraq and Palestine had published several monographic studies and scientific articles, relating to the history of Armenia and Arab-Armenian historical, political and cultural relations. They were interested in interpretation of the actitvity of the Armenian king Tigran the Great (95-55 B.C.) and the role of the Armenian Empire in the Middle Eastern geopolitical region, considering it a decisive political and military factor of that epoch. Among them we have to mention first of all the works by Fuad Hasan Hafiz, Marwan al-Mudawar, Usman al-Turk, Samir Arbash, Salih Zahr al-Din, Umar al-Doukaki and others. In fact under their scope are almost all aspects of internal and foreign policy of the Armenian king of kings Tigran the Second. One of the main topics for them is the problem of division of the ancient history of Armenia into different epochs and study each of them. For Arab historians in discussing this problem as a main landmark serves the reign of Tigran the Great. According to it Egyptian historian Fuad Hasan Hafiz in the book “History of Armenia from the Beginning to our Days” divided the ancient Armenian history into three epochs: a) the epoch up to Tigran the Second (880-95 B.C.), b) the epoch of Tigran the Second (95–55 B.C.) and c) post-Tigranian epoch (55–15 B.C.). As for Marwan al-Mudawar, he reviewed in his book “Armenia Through History” the epoch of Tigran the Second , dividing it into two stages: a) “blossoming forth of the Armenian kingdom, its unification and strengthening of Empire (94-69 B.C.)”, and b) “weakening and downfall of Empire and returning back the kingdom to its usual borders (69-55 B.C.)”. The Arabian historians considered the special merit of Tigran the Second the unification of Armenia , creation of the united Armenian kingdom and its transformation into a powerful Empire of the Middle and Near East. They examined the ways of establishment of Armenian Empire, mentioning that the Armenian kingdom became an Empire through several victorious wars, headed by Tigran the Great, especially against Persia, “using, - as mentioned al-Mudawar,- a huge and well-armed army”. They tried to explain the motives and the reasons of that policy of Tigran the Great and came to the conclusion that his policy and enormous efforts were directed to liberation of Armenia from the influence of foreign states and to turn Armenia into a completely independent state. This point of view is best reflected in Samir Arbash's book “Armenia: Land and People”, in which he wrote: “Tigran the Second or the Great King implemented from the beginning all his efforts to expand the Armenian kingdom, to put an end to the influence of his two great neighboring states, such as the Seleucid state and the Persian state”. Moreover, according to the point of view of Usman al-Turk, “The Armenians were obliged to wage bloody wars to defend their freedom and independence”. Arab authors considered that the inclusion of Mesopotamia, Syria, Lebanon, Palestine, Judea and several territories of Asia Minor in Armenian kingdom and establishment of Armenian Empire by Tigran the Great were necessary steps in realization of that purpose. Arab authors, naturally, could not ignore the inclusion of the above-mentioned Arab countries in the Armenian Empire. But they examined that problem without attempting to politicize that reality and without any superfluous emotions. They accepted it as a historical fact and nothing more. We could not find in their works even a hint of accusing it. And that fact did not prevent them to evaluate very highly foreign policy and military actions of Tigran the Great and his great role in the destiny of the Middle Eastern countries. On elucidating the relations of Tigran the Great with Roman Empire and the Armenian-Roman confrontaion, the sympathy of Arab scholars is on Tigran the Great's side. Fuad Hasan Hafiz, Marwan al-Mudawar, Usman al-Turk and other contempo-

rary Arab historians gave the definition of the boundaries of the Armenian Empire. According to Usman al-Turk, the author of the book “Pages of the Armenian People”, the boundaries of Armenian Empire “had reached to the shores of the Caspian sea in the north, to Cappadocia in the west, to Iraq in the east, and her influence expanded in the south over the country of the Jews, after that when he (Tigran the Great.– *N. H.*) occupied Phoenicia and Syria”. In fact, the same point of view shared Samir Arbash and Murwan al-Mudawar. For example, al-Mudawar stated that Tigran the Great's Empire “expanded from the Caspian sea in the east to the Mediterranean in the west, from Caucasus in the north to Palestine and Cilicia in the south and south-west”. According to their opinion the territory of the Armenian Empire was equal to 700,000 sq.km. The Arab authors stated that the Armenians gained those historical victories and had impressive achievements due to the political wisdom and military talent of their king of kings Tigran the Great, his great organizational capacities and strong army. They underlined that the Armenian king had created a very strong, big, disciplined and well-trained army, consisting of infantry and cavalry, numbering about 100 000 soldiers. One of the main topics which was in the center of the Arab historiography is the title of king Tigran himself and the name of the Armenian state, noting an evolution in it. At first Tigran the Second carried the title “King of Armenia” – “Maliq al-Armaniya”, while the state was called “Kingdom of Armenia” – “Mamlaqat al-Armaniya”. Those titles were valid until enlargement of the Armenian kingdom, inclusion in it new territories and transformation of it into Armenian Empire. From that time on there were changes in the title of king Tigran and in the name of the Armenian state. Arab authors connect that change of the title also with king Tigran's splendid victories over Persia , after which, as stated Samir Arbash, “he in 83 B.C. declared himself “Maliq al-Muluq” – “King of kings”, a title, which before that usually carried the Persian kings, but after being defeated by Tigran it was yielded to him. In parallels he carried the title “Great”. So at that period, as confirmed the Arab historians, his full title was “Tigran II the Great, King of Kings” – “Tigran al-Tani al-Qabir, Maliq al-Muluq”. Accordingly a principal change took place in the name of the Armenian state. It was renamed into Empire and was officially called “Armenian Empire of Tigran Second the Great, King of Kings”. Furtherly, as stated the Arab authors, the title of Tigran was enriched by another name, which is connected with the Roman consul and famous orator Cicero. Marwan al-Mudawar on citing Cicero, indicates that “The Roman consul Cicero called Tigran II “The Great King of Asia” – “Maliq Asiya al-Azim”. That title, i.e. “The Great King of Asia” is also used by Fuad Hasan Hafiz, Samir Arbash , Umar al Dukaki, Usman al-Turk and others. In fact the same definition we find in the Islamic Encyclopaedia. The Arab historians collecting all those titles of Tigran II called him “Tigran II the Great, King of Kings and the Great King of Asia”, and Armenia – “Empire of Tigran II the Great, King of Kings and the Great King of Asia”. These facts come to confirm the undenialable truth that the Armenian king Tigran II was one of most world-famous great figures of his time, who challenged his two most dangerous enemies - Persia and Roman Empire, and could create Armenian Empire, carry the highest titles about which had dreamed many kings , but only a few could get it. Among them one of the first was Tigran the Second, Armenian king Tigran, the Great King of Kings, Tigran the Great - king of Asia. The results of the studies of Arab historians and their conclusions which are first introduced in scientific sphere, will enrich the sources on the ancient history of Armenia and help to have more complete notion on the political portrait of the great Armenian king Tigran the Second and the Armenian Empire.